# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԼԱՊՇԻՆԻ ԳՈՐԾՈՎ

**08.02.2017 16:02**

2017թ. փետրվարի 7-ին Բելառուսի Հանրապետությունը Ալեքսանդր Լապշինին հանձնել է Ադրբեջանական Հանրապետությանը:

Փաստերի ժամանակագրական ուսումնասիրությունը վկայում է, որ այս գործընթացը ծագել և իրականացվել է միայն քաղաքական նպատակներով՝ շրջանցելով ներպետական և միջազգային իրավական կարգավորումները:

Այսպես՝

1. 2016թ. դեկտեմբերի 15-ին Ալեքսանդր Լապշինը ձերբակալվել է Մինսկում՝ ադրբեջանական իշխանությունների պահանջով: Ինչպես պարզ է դարձել Լապշինի վերաբերյալ ինտերպոլով միջազգային հետախուզում չի հայտարարվել :
2. 2016թ. դեկտեմբերի 16-ին Բելառուսի իշխանություններն ընդունել են որոշում Ալեքսանդր Լապշինին կալանավորելու մասին:
3. 2017թ. հունվարի 17-ին Բելառուսի գլխավոր դատախազի տեղակալ Ա.Ստուկն ընդունել է որոշում՝ Ալեքսանդր Լապշինին ադրբեջանական կառավարությանը հանձնելու մասին: Այս որոշումը Լապշինին հանձնվել է միայն 2017թ. հունվարի 21-ին:
4. 2017թ. հունվարի 24-ին Ալեքսանդր Լապշինը բողոքարկել է գլխավոր դատախազի տեղակալի որոշումը Մինսկի քաղաքային դատարանին:
5. 2017թ. հունվարի 26-ին Մինսկի քաղաքային դատարանը մերժել է Լապշինի բողոքը: Այս որոշումը կարող էր բողոքարկվել 10 օրվա ընթացքում:
6. 2017թ. փետրվարի 3-ին Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն հրապարակավ հայտնել է իր դիրքորոշումը, մասնավորապես նշելով «*նա դեռ այստե՞ղ է....պետք էր նրան ուղարկել, որտեղ պետք էր... ես ձեզ հանձնարարել եմ հանձնեք նրան օրենքի համաձայն..*»:
7. 2017թ. փետրվարի 6-ին Ալեքսանդր Լապշինը բողոքարկել է Մինսկի քաղաքային դատարանի որոշումը Գերագույն դատարանին:
8. 2017թ. փետրվարի 7-ին, առավոտյան ժամը 10.00-ին Բելառուսի գերագույն դատարանը, դռնփակ նիստում, որոշել է մերժել Լապշինի բողոքը:
9. 2017թ. փետրվարի 7-ին Ալեքսանդր Լապշինին հանձնել են ադրբեջանական իշխանություններին:

Բելառուսի Հանրապետությունը Ալեքսանդր Լապշինին հանձնել է խախտելով «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավահարաբերությունների մասին» կոնվենցիայի (կնքված՝ քաղաք Քիշնևում, 07.10. 2002 թվականին, **այսուհետ՝ Կոնվենցիա**) 66-րդ հոդվածի 2-րդ մասի և 89-րդ հոդվածի 1-ին մասի «e» կետի պահանջները:

Նշված նորմերի համաձայն՝

*- Քրեական պատասխանատվության ներգրավելու համար հանձնումն իրականացվում է այն արարքների համար, որոնք հայցող և հայցվող պայմանավորվող Կողմերի ներպետական օրենսդրությամբ հանդիսանում է քրեորեն պատժելի և նախատեսվում է պատիժ առնվազն մեկ տարվա ազատազրկում.*

*- հանձնում չի իրականացվում, եթե կան ծանրակշիռ հիմքեր ենթադրելու, որ հանձնման մասին հարցումը պայմանավորված է տվյալ անձին հետապնդելու հետ՝ կապված նրա՝ ռասայական, սեռային, դավանանքի, էթնիկական պատկանելության կամ քաղաքական համոզմունքների հետ:*

***Կոնվենցիայի 66-րդ հոդվածի 2-րդ մասի առնչությամբ.***

Ադրբեջանական իշխանությունների կողմից Ալեքսանդր Լապշինին վերագրվում է երկու արարք՝

(1) հանրային կոչեր է արել ուղղված Ադրբեջանի տարածքային ամբողջականության խախտմանը, ինչով ըստ Ադրբեջանի խախտել է իր քրեական օրենսգրքի 281.2 հոդվածը:

(2) ապօրինաբար այցելել է ԼՂՀ տարածք, ինչով ըստ Ադրբեջանի խախտել է իր քրեական օրենսգրքի 318.2 հոդվածը.

Ուշադրություն դարձնենք, որ Ալեքսանդր Լապշինին վերագրվող երկու արարքներից մեկը նույնիսկ Ադրբեջանի քրեական օրենսգրքով հանցագործություն չի համարվում, քանի որ քրեական օրենսգրքի 281.2 հոդվածում խոսքը **Ադրբեջանիպահպանվողպետականսահմանը** հատելու արարքի մասին է: Պահպանվող եզրույթը ուղակիորեն հաստատում է, որ տարածքը պետք է գտնվի ադրբեջանական իշխանությունների վերահսկման ներքո: Մինչդեռ, անվիճելի

փաստ է, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքը չի գտնվում ադրբեջանական իշխանությունների վերահսկման կամ պահպանման ներքո, հետևաբար Ալեքսանդր Լապշինը որևէ կերպ չէր կարող խախտել վերոհիշյալ նորմի պահանջը:

Ալեքսանդր Լապշինին վերագրվող մյուս արարքը հանցագործություն չի համարվում Բելառուսի քրեական օրենսգրքով: Այսպես, Ադրբեջանի քրեական օրենսգրքի 281.2 հոդվածը հանցագործություն է համարում. «հանրային կոչերը՝ ուղղված իշխանությունը բռնի զավթելուն, իշխանությունը բռնի պահելուն կամ սահմանադրական կարգի բռնի փոփոխմանը կամ **Ադրբեջանի տարածքային ամբողջականության խախտմանը**: Ելնելով Ալեքսանդր Լապշինի՝ ԼՂՀ անկախացման հրապարակային կոչերի բովանդակությունից, հստակ կարելի է պնդել, որ ադրբեջանական իշխանությունները հանցագործություն են համարում Ադրբեջանի տարածքային ամբողջականության խախտմանն ուղղված Լապշինի հրապարակային կոչերը: Մինչդեռ, Բելառուսի քրեական օրենսգիրքը Բելառուսի տարածքային ամբողջականության խախտման դեմ ուղղված կոչերը չի համարում հանցագործություն:

***Կոնվենցիայի 89-րդ հոդվածի 1-ին մասի «e» կետի առնչությամբ.***

Կոնվենցիոն նորմերը բացառում են խնդրվող անձի հանձնումը, եթե առկա են ծանրակշիռ հիմքեր՝ ենթադրելու, որ հանձնման վերաբերյալ հարցումը պայմանավորված է տվյալ անձին հետապնդելով՝ կապված նրա՝ ռասայական, սեռային, դավանանքի, էթնիկական պատկանելության կամ քաղաքական համոզմունքների հետ: Տվյալ դեպքում անվիճելի է այն փաստը, որ Ադրբեջանական Հանրապետության պետական մարմինները իրականացնում են անձի հետապնդում՝ կապված նրա քաղաքական համոզմունքների և մասնագիտական գործունեության հետ:

Ադրբեջանի իշխանությունների կողմից Լապշինի հետապնդումը հակասում է նաև ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին, համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք ունի համոզմունքների ազատության և դրանք անկաշկանդ արտահայտելու իրավունք. այս իրավունքը ներառում է համոզմունքներին անարգել հավատարիմ մնալու, տեղեկատվություն ու գաղափարներ որոնելու, ստանալու և լրատվության ցանկացած միջոցներով տարածելու ազատությունը՝ անկախ պետական սահմաններից (**հոդված 19**):

Վերոհիշյալ հիմքերը հաշվի առնելով Բելառուսի Հանրապետությունը չէր կարող Ալեքսանդր Լապշինին հանձնել Ադրբեջանին:

Իրականում, Ալեքսանդր Լապշինը այս գործընթացի զոհ է դարձել միայն այն պատճառով, որ հրապարակայնորեն արտահայտել է իր դիրքորոշումը և քննադատությունը:

Լապշինի հանձնումը Ադրբեջանի իշխանություններին նրա համար հղի է բացասական հետևանքներով: Մասնավորապես, խոսքը խոշտանգումների, անմարդկային վերաբերմունքի և այլ ոչ իրավաչափ արարքների մասին է (ՄԱԿ-ի «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի տեսակների և պատիժների մասին» կոնվենցիա):

Վերոգրյալը հաստատվել է նմանատիպ վերաբերմունքի բազմաթիվ դեպքերով, որոնք կիրառվել են հայկական ծագում ունեցող անձանց կամ այն անձանց նկատմամբ, ովքեր որևէ տեսակի կապ են ունեցել Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հետ: Ավելին՝ Ադրբեջանը խրախուսում է նրանց, ովքեր ցուցաբերում են անմարդկային վերաբերմունք հայկական ծագում ունեցող անձանց կամ այն անձանց նկատմամբ, ովքեր որևէ կապ ունեն Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հետ:

Որպես վերոգրյալի հավաստում՝ հիշեցնենք, որ 2004 թվականի փետրվարի 19-ին՝ գիշերը, Բուդապեշտում Ռամիլ Սաֆարովը կացինով սպանել է քնած, ազգությամբ հայ սպային՝ Գուրգեն Մարգարյանին: Երկու սպաներն էլ անցնում էին անգլերենի դասընթացներ Հունգարիայի մայրաքաղաքում: Հունգարիայի դատարանը դատապարտել էր Սաֆարովին ցմահ ազատազրկման՝ 30 տարվա ընթացքում առանց ներման իրավունքի, սակայն 2012 թվականի օգոստոսի 31-ին Սաֆարովը փոխանցվել էր Ադրբեջան՝ հետագա պատիժը այնտեղ կրելու համար: Հենց նույն օրը Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը, ներում է շնորհել նրան, իսկ Ադրբեջանի պաշտպանության նախարարը տվել է մայորի կոչում և բնակարան:

Հարկ է նշել, որ Ադրբեջանը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն այցելելու համար 180 լրագրողի հայտարարել է անցանկալի անձ, արգելելով նրանց մուտքն Ադրբեջան:

Ալեքսանդր Լապշինի հետ կապված այս նոր գործընթացը ուղղակիորեն նպատակ է հետապնդում ահաբեկման ճանապարհով մեկուսացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչությանը, ընդ որում վտանգ ստեղծելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և ԼՂՀ այցելած այլ անձանց համար:

**Ելնելով վերոգրյալից՝ կոչ ենք անում իրավապաշտպաններին, քաղաքացիական հասարակության ակտիվին և լրագրողներին օժանդակել Ալեքսանդր Լապշինի խնդրով միջազգային հանրային կարծիքի ձևավորմանը՝ հատկապես հարցը հրապարակայնացնելով և իրավական գնահատականներ հնչեցնելով:**

*Հ.Գ. Վստահ ենք, որ միջազգային հանրության ճնշումը կզսպի Ադրբեջանին:*

**Հայաստանի Հանրապետության**

**փաստաբանների պալատի նախագահ՝** **Արա Զոհրաբյան**

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })